ոտս ծաղկաքաղ արարեալ և 'ի բուն պատմութեանցն հանեալ:

## ԿԱՐԳ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԱՅՍԵՐԱՑՆ ՀՌՕՄԱՅԵՑՒՈՑ.

Այսոքիկ են Կայսերք Հռօմայեցւոց, զոր կամեցայ ժողովել մի գլխի միոյն պատմելով զամփոփս 'ի բազմաց՝ զգործս նոցա, մանաւանդ զմեծամեծս անցից նոցին և արարմանց համառօտապէս և սուղ ասութեամբ սկսեալ յՕգոստոս կայսերէ. յորում ժամանակի ծնաւ Քրիստոս Աստուած մեր 'ի Բեթղեհէմ, դնելով անափ զթիւ փրկչին, և վասն կենաց և մահու նոցա գրելով, զորս 'ի պատմագրացն կարացի գտանել: